

Երոցին ու ձեռաց միջուկն արիւն վառ
 Գրնտաձև գիզուեր վարդի հաւասար .
 Ըզակադանգուր մազն 'ի բայ չըջէ
 Ի յանսաղաւարտ քաջին ճակատէ . . .
 Խելազնաց լինի թնայ Եղիշէ ,
 Ըզմեծըն վարդան 'ի հոն գրտանէ : —
 Լեզու քաջին լուռ ' խօսի ինքն ամէն .
 Այտքըն թրուալիւր և յնք կրուրնձկէն .
 Մահուն իսկ կարծես հրաման յիւր մահէն
 Տայ իշխանարար և ամէնք սարսեն .
 Ի չթմանցրն մէջ կայ ծայր նիզակին
 Քառածայր թևօք ոսկեզարդ խաչին
 Զոր պապն իւր Սահակ 'ի ժամին յետին
 Յիշատակ երես քաջապանծ թողին .
 Ընդ երես քաջին մահախառն անմահ
 Զամբողջ գիշերոյն զերրորդըն զայն պահ
 Հայի Եղիշէն 'ի զարմանս և յահ ,
 Խորին լըռութեամբ լեզուն չըջապահ .
 Կռէ զգլուխ քաջին ձեռօքն երերուն
 Որ զինքըն գրաւ գին Հայկազանց սիրուն ,
 Համբուրէ գձակասն ուր բազդ Հայերուն
 Զանդարձն էր գրբեր ապագայ գարուն .
 Ընդ լայնագիրկ լանջըն հայի ուռած
 Քաջ քաջ և վեհ վեհ կրթից տուն սիրած ,
 Իբրև պղղընծի ամուր մի կանգնած
 Պաշտպանել զրրգիք թորգոմայ ցաւած :
 Ընդ գեղեցիկ ձեռքն հայի' ում հնազանդ
 Կայր ամէն հրաման և շատոնց մի բազդ ,
 Ուսկից յաղթանակք և փառք մեծազարդ
 Ելնէին երսուն տարի անընդհատ .
 Զեր նա այնպէս վեհ երեցած գիմօք
 Երբ յիսուն անգամ դառնալով փառօք
 Պրսակս յաղթութեանց բերէր սփռէր լոկ
 Հայրենի շիրմաց տաճարաց վրայօք ,
 Կամ Բասլաց . Խաղալայ և հարիւր ազանց
 Խրոխտ թագաւորներ' ընդ Կովկաս անցած
 Երբ իջեցընէր տանէր տայր Արեաց
 Ինքն իբր 'ի յորսէ գառնայր եղջերուաց ,
 Ինչպէս 'ի վերայ քաջայն այն յեցուկ
 Յետին յաղթանակ Հայոց անանցուկ
 Զինքըն կանգնելով' ոտին ընդ ոտիւք ,
 Ինք զինքըն գիտէր հոգւոյն նայեցիւք . —
 « Ո՛հ ես 'ի ճակտիդ վրայ երգնում , վարդան ,
 Կանչեց Եղիշէ , որ ձեռն աստուածեան
 Հոգ փոխարէն գրբեր է քո մեծ մահուան .
 Թէպէտ դարք անցնին , գու մընսն վարդան , . . .
 Զայս ասաց ու հետ գիշերւան չըքին
 Փախաւ ծածկեցաւ սիրաձայն հոգին :
 Պըլլուրն 'ի սարէն ուսաւ զիորին բան ,
 Կանչէ զբուն գիշերըն վարդան , վարդան :
 . . .
 Կանչէ պըլլուրիկ , կանչէ հոգեձայն ,
 Արգեօք զուխտ մահուն սուրբ' յիշէ վարդան :

ՆԱՀԱՊԵՏ

ՀՆԱԽՕՍՍՈՒԹԻՒՆ

Պետրա քաղաքին աւերակները :

ՀնՈՒԹԵԱՆՑ սէրը հայրենասիրու-
 թեան հետ զարմանալի կապակցու-
 թիւն մը ունի . վասն զի հնասէր մը
 չկայ որ օտար աւերակներ ալ քննե-
 լով ու անոնց վրայ մտածելով՝ իր հին
 հայրենիքը միտքը չգայ . հայրենասէր
 ալ չկայ որ իր հայրենեաց աւերակնե-
 րուն վրայ խորհրդածութիւններ ը-
 նելով՝ ընդհանուր հնութեանց վրայ
 ալ սէր մը չունենայ : Լ'ս ենթադրու-
 թեամբ կը համարինք թէ որ և իցէ
 հնութեանց յիշատակութիւնները սի-
 րելի ու զուարճալի պիտի ըլլան հի-
 մակուան մեր ուսումնասիրաց , և մա-
 նաւանդ արեւելեան հնութիւնները :

Լ'պառաժ Լ'րաբիա ըսուած երկրին
 մէջ , որ հիմա քարոտ ու անապատ եր-
 կիր մըն է , ատենով այնպիսի զարմա-
 նալի ու գեղեցիկ շէնքեր քաղաքներ
 կան եղեր որ եթէ հիմա անոնց աւե-
 րակներն ալ մնացած չըլլային , լսող-
 ները չէին կրնար հաւտալ : Լ'ս քա-
 ղաքներէն մէկն է նաև Պետրա ը-
 սուածը , որ Լ'դոլմայեցւոց կամ Լ'ա-
 բատացւոց երկրին մայրաքաղաքն է
 եղեր , և հիմա իր ընդարձակ ու մե-
 ծագործ աւերակներովը , և մանա-
 ւանդ բոլոր քաղաքը ժայռերու մէջ
 փորուած ըլլալուն համար՝ աշխարհ-
 քիս մէջի հռչակաւոր և հետաքրքրու-
 թեան արժանի հնութիւններէն մէկն է :

Լ'ս Պետրա քաղաքը հիմակուան
 Լ'րաբացւոց Վատի-Սուսա (Զոր
 Սովսեսի) ըսած հովտին մէջ է , որ
 քարուտ՝ բայց մշակեալ է , և գիրքը
 արեւելքէ արեւմուտք երկնցած . հով-
 տին մէկ կողմը ուրիշ ձոր մըն ալ կայ
 որ գէպ 'ի հարաւ կ'երկընայ . ասոր
 գիմացն ալ գեղ մը կայ բոլոր պտղա-
 տու ծառերով զարդարուած , ու ան
 գեղին քովն է Պետրայի գերեզման-
 նոցը : Լ'նկէ անդին երկայն ճամբայ



Պետրա քաղաքին աւերակները :

մը կ'ելլէ առջևդ՝ երկու կողմը փորուածքներով ու գերեզմաններով զարդարուած . ճամբուն ծայրը լեռներու մէջ նեղ անցք մը կայ՝ ուսկից ջուր կը վազէ , և աս անցքն է միայն արևելեան կողմէն Պետրա երթալու ճամբան , որ երկու ձիաւոր անցնելու չափ լայնք հազիւ ունի . իսկ երկու կողմի լեռները պատի պէս շիտակ են , ու 400^{էն} ինչուան 700 ոտք բարձրութիւն ունին . տեղ տեղ ալ իրարու վրայ այնպէս ծռած են որ երկինքը չերևնար : Ըն ճամբէն դուրս ելլելուդ պէս՝ բոլոր Պետրա քաղաքին աւերակները առջևդ կ'ելլեն , այնպէս որ անոնք տեսնելով մէկէն կը գուշակես ան հարստութիւնն ու փառաւորութիւնը որ ատենով ունեցեր է :

Պետրա քաղաքը՝ հին ատենի աշխարհագիրներուն պատմիչներուն ու բանաստեղծներուն խօսքերէն գիտենք որ ատենով խիստ վաճառաշահ քաղաքներէն մէկն է եղեր . և կ'երև-

նայ թէ Մովսեսի ժամանակէն սկըսած է վաճառաշահութիւնը , վասն զի Հնդկաստանի բոլոր վաճառքները հոն կը ժողվուէին : Ըտեն անցնելով երբոր նաւորդութեան պատճառաւ կամաց կամաց կարաւանները պակսեցան , Պետրա քաղաքն ալ առջի մեծութենէն ընկաւ , և բնակիչքը պակսելով՝ ան բազմամարդ քաղաքն ալ անպատ դարձաւ , ու մէջի տաճարները , թէատրոնները , ջրանցքները , բերդերը , յաղթական կամարներն ու գերեզմանները բոլոր կործանած քաղաքին աւերակներուն մէջ թաղուեցան : Ըեւի ալ ցաւալին ան է որ մէջը երևելի արձանագրութիւն կամ յիշատակարան մըն ալ չկայ . այլ միայն մէկ լատիներէն արձանագրութիւն մը մնացեր է այսպէս , Q . Prætestus կամ Prætestatus Florentinus , այսինքն Ն . Պրետեստոս կամ Պրետեստոս Փլորենտացի . կը կարծուի թէ ասիկայ Լքրիանոս կամ Լյտոնինոս

կայսերաց ժամանակը Հռովմայե-
ցւոց կողմանէ գաւառապետ եղած է
աս կողմերը :

Բոլոր աւերակ դարձած շէնքերուն
մէջ դեռ ինչուան հիմա միայն մէկ
ամբողջ մնացած շէնք մը կայ , որ ու-
մանք տաճար՝ ոմանք ալ գերեզման
է կ'ըսեն , և անոր պատկերն է հոս
գրածնիս : Ըս շէնքն ալ մէկալներուն
պէս ամբողջ ժայռի մը մէջ հիանալի
կերպով փորուած է իր սիւներովն ու
արձաններովը : Ըրաբացիք ասոր Խաչ-
նէի Ֆերառն կամ Պանչ Փարառնի կ'ը-
սեն , իբր թէ Փարառնի դանձը հոն
թաղուած է . այսպիսի սուտ կար-
ծիքներով որչափ հնու թիւններ կ'աւ-
րեն կը փձացընեն տգէտ մարդիկ ա-
մէն տեղ : Տաճարին մէջի կողմն ալ
նոյնպէս նոյն լեռնէն փորուած սիւ-
ներ , խարխիսներ , սեան գլուխներ ,
զարդեր , արձաններ ու ներքին սե-
նեակներ կան : Վիրքը և դրսի ձեւին
ճարտարապետութիւնը շատ սիրուն
է . բայց ափսոս որ պզտի դրան սիւ-
ներէն մէկը պակասած է . ներսի տես-
քը դրսին հետ ամենեւին համեմա-
տութիւն չունի : Ս'էջէն քանի մը
ոտք սանդուխներով մէկ սենեակ մը
կը մտնես որ թէ պէտ աղէկ ու համե-
մատ փորուած է , բայց պատերուն
անհարթութենէն կ'երևնայ որ դեռ
շէնքը չլըմնցած՝ երեսէ ձգուած է .
ուրիշ երկու կողմնական սենեակներ
ալ կան . մէկը անկանոն կերպով շի-
նուած , և մէկալը երկու ծակ ունի
որ կարծես թէ մէջերնին սնտուկ դը-
նելու համար փորուած են . աս բա-
ներէս կ'երևնայ թէ ան շէնքը տաճար
չէ , հապա գերեզման է : Ըս շէնքին
մօտ է նաև ընդարձակ թէստրոնը :

Յովսէպոս , Եւսեբիոս և սուրբն
Հերոնիմոս կը վկայեն թէ Մհարոնի
թաղուած Հովր լեռը աս Պետրա քա-
ղաքին լեռներէն մէկն էր , որ ինչուան
հիմայ ալ Տաճկաց ուխտատեղի եղած
է : Եոյն աւերակներուն մօտ ձորի մը
մէջ ալ եօթը ոտք բարձրութեամբ
քար մը կայ որ հիմակուան Ըրաբա-

ցիք կարծես թէ Սոփսէս մարգա-
րէն անոր տակը թաղուած է :

Պետրայի աւերակները ստորա-
գրող առաջին եւրոպացի ճանապար-
հորդը եղաւ Պուրբհարտ՝ 1812^{ին} :
Իրմէ ետքը ուրիշներէն աւելի հուշա-
կաւոր եղան Տըլպորտ և Լինան
գաղղիացի ճանապարհորդները որ
աւելի ուշադրութեամբ քալեցին ու
տեղն 'ի տեղը ստորագրեցին Պետ-
րայի աւերակները 1830^{ին} :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ընաբանական հարցմանքներ :

Ինչո՞ւ էրբեմն կարկուտը ընկուզի
կամ հաւկը թի չափ ալ մեծութիւն
կ'ունենայ .

— Ս'սն զի վար իյնալու ատենը
չատ ջրի մասունք մէկտեղ կը միանան .
և կամ երբոր վերի ցուրտը կը հաս-
նին , ամէն ջրի կաթիլները սառ կը
կտրին , և ուժով վար իջնալու ատեն
չատը միատեղ իրարու կը կպչին ու ա-
նանկ վար կ'իյնան . աս իրարու հետ
միանալին անկէց յայտնի է որ մեծ
կարկուտները միշտ անկիւնաւոր կ'ը-
լան :

Ինչո՞ւ միայն ձմեռը ձիւն կուգայ ,
և ամառը չգար .

— Ս'սն զի ձիւնն ալ կարկտի
պէս ջրային մասունքներու սառելէն
կը ձեւանայ : Իրաւցընէ ամառ ատեն
ալ ձիւն կը գոյանայ , ինչպէս որ
բարձր լեռներու վրայ միշտ կը տես-
նուի , բայց խիստ տաք ատեն իրենց
պնդութիւնը քիչ ըլլալով՝ վար իջնա-
լէն առաջ ջուր կը դառնան :

Ինչո՞ւ ջրհանի մը մէջի ջուրը 32
ոտքէն աւելի չբարձրանար՝ որչափ ալ
մխոցը շարժելու ըլլաս .

— Ս'սն զի 32 ոտք բարձրութե
ջրի սիւնակ մը այնչափ ծանրութիւն
ունի՝ որչափ որ ծանրութիւն ունի